ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «20» հունվար 2023 թ. N 72-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 199-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 1107-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 2022-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1 կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1.Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի մարտի 16-ի ««Սերտիֆիկացման միջազգային կենտրոն» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 199-Ա հրամանով հաստատված հավելվածի 16-րդ կետից հետո լրացնել նոր 17-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«17. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-20 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) «Սերտիֆիկացման միջազգային կենտրոն» ՍՊԸ և «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված N LB001459 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N LB001459 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2023 թվականի հուլիսի 21-ը ներառյալ) 1 օր հետո Էկոնոմիկայի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

2. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի օգոստոսի 31-ի «Սերտիֆիկացման միջազգային կենտրոն» ՍՊԸ սերտիֆիկացման մարմնին Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 1107-Ա հրամանով հաստատված հավելվածի 17-րդ կետից հետո լրացնել նոր 18-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«18. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 2-րդ կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-19 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) Սերտիֆիկացման միջազգային կենտրոն» ՍՊԸ և «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված N LB001459 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N LB001459 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2023 թվականի հուլիսի 21-ը ներառյալ) 1 օր հետո Էկոնոմիկայի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 9-ի ««Արթլաբ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 2022-Ա հրամանով հաստատված հավելվածի 10-րդ կետից հետո լրացնել նոր 11-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«11. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 3-րդ կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-42 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) «Արթլաբ» ՍՊԸ և «ՌԳՍ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N LI002936, մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2023 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ) 1 օր հետո Նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

4. Սույն հրամանի 1-3-րդ կետերով նախատեսված լրացումը գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124